Արձանագրություն № 3
գնահատող հանձնաժողովի նիստի

1. Տվյալներ պատվիրատուի, ընթացակարգի (ծածկագիր), ծառայությունների ձեռքբերման, նիստի անցկացման մասին	
Պատվիրատու	*«ՀԱԷԿ» ՓԲԸ*
Գտնվելու վայրը	*ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր*
Ընթացակարգի ծածկագիրը	«ՀԱԷԿ-ՄԱ-ԾՁԲ-5/22»
Ձեռք բերվող ծառայության անվանումը	«ՀԱԷԿ» ՓԲԸ չափագիտական լաբորատորիայի հավատարմագրված, որպես տրամաչափարկման լաբորատորիայի հետագա հավատարմագրում՝ ըստ ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17025:2019 ստանդարտի
Նիստի անցկացման վայրը	*ք.Մեծամոր, «ՀԱԷԿ» ՓԲԸ վարչական շենք, 135 Ա սենյակ*
Նիստի անցկացման օրը և ժամը	29.04.2022թ. ժամը 11:00
Նիստի անցկացման նպատակը	Ընթացակարգի տեխնիկական բնութագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ
2. Տվյալներ նիստին ներկա հանձնաժողովի կազմի մասին	
Հանձնաժողովի նախագահ	Մ. Կարապետյան ԳԲ պետի ժ/պ
Հանձնաժողովի անդամներ	Ս. Մելքումյան ՁԼ պետ
	Տ. Հովհաննիսյան ՁԼ առաջատար ճարտարագետ ճարտարագետ
Քարտուղար	Ա. Ղազարյան ԳԸԲ գլխավոր մասնագետ

Համակարգող քարտուղարը ներկայացրեց, որ գնման ընթացակարգը գտնվում է պայմանագրի կնքման փուլում, մասնակիցը՝ «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ ճանաչվել է ընտրված մասնակից և նրան է ուղարկվել հրավերով սահմանված Պայմանագրի նախագիծը:

Հանձնաժողովի նախագահ Մ. Կարապետյանը ներկայացրեց, որ «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի տնօրենի 14.04.2022թ. №ԱՕ-232 գրությամբ հիմնավորվում է, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 08.04.2022թ. ներկայացրած տրամաչափական լաբորատորիայի հայտը «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ը դիտարկել է որպես առաջին հավատարմագրում: Գրությամբ նշվում է՝

« առաջին հավատարմագրում և հետագա հավատարմագրում գործընթացների արդյունքում <u>հավատարմագրման ժամանակահատվածները տարբերվում են (համապատասխանաբար 3 և 4 տարի)</u>, ուստի <u>անհրաժեշտ է Ձեր կողմից ներկայացված Մեկ անձից գնման մասին հայտարարության մեջ հստակեցնել հավատարմագրման գործընթացի տեսակը</u>՝ համապատասխանեցնելով այն 08.04.2022թ. ներկայացրած հայտում նշված հավատարմագրման գործընթացի տեսակին և գրության երկրորդ պարբերությունից հանել հետագա բառը»:

Համաձայն վերը նշված առաջարկի **<u>անհրաժեշտ է հրավերում կատարել գնման առարկայի անվանման, բնութագրի և ծառայության մատուցման ժամկետների փոփոխություններ</u>**:

Հանձնաժողովի անդամներ Ս. Մելքումյանը և Տ. Հովհաննիսյանը ներկայացրեցին, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ չափագիտական լաբորատորիայի հավատարմագրումը արդեն հրատապ է և անհրաժեշտ է առավելագույնս սեղմ ժամկետներում լուծել առաջադրված խնդիրը:

Համակարգող քարտուղարը ներկայացրեց, որ ըստ էության անհրաժեշտ է **<u>հրավերում կատարել գնման առարկայի անվանման, բնութագրի և ծառայության մատուցման ժամկետների փոփոխություններ</u>** և

ներկայացրեց, որ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի՝ «Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում»:

Համաձայն 25-րդ հոդվածի՝ «Արգելվում է՝ փոփոխել պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների բնութագրերը»,

Համաձայն 36-րդ հոդվածի՝ «Մինչև սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետի ավարտը կողմերի համաձայնությամբ կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ՝ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը»:

Հանձնաժողովը քննարկելով «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի տնօրենի 14.04.2022թ. №ԱՕ-232 գրությունը, ղեկավարվելով «Գնումների մասին» և «Հավատարմագրման մասին» ՀՀ օրենքների պահանջներով առաջարկվեց՝

գնման ընթացակարգը հայտարարել չկայացած«Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, այն է «Դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը»:

Ընդունվեց որոշում՝ կողմ – 3 , դեմ - 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Մ. Կարապետյան

Անդամներ՝ _____ Ս. Մելքումյան

_____ Տ. Հովհաննիսյան

Համակարգող քարտուղար՝ _____ Ա. Ղազարյան